



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
Հ Ր Ա Մ Ա Ն

23 Տարւոյի 2011թ.

N 690 -Ա

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N 1-06/130-Ա
ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Հիմք ընդունելով «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11¹-րդ հոդվածը,

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

Հաստատել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2006 թվականի մարտի 16-ի «Անհատ ձեռնարկատերերի կողմից պետական գրանցման վկայականը հարկային մարմին ժամանակավորապես հանձնման և հետ ստացման կարգը հաստատելու մասին» N 1-06/130-Ա հրամանում կատարվող փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

Նախագահ

Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի «ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՀԱՆՁՆՄԱՆ և ՀԵՏ ՍՏԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 1-06/130-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հրամանով հաստատված «Անհատ ձեռնարկատերերի կողմից պետական գրանցման վկայականը հարկային մարմին ժամանակավորապես հանձնման և հետ ստացման» կարգի 1-ին կետում՝

- 1) 1.1-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել.
- 2) 1.2-րդ և 1.3 ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

“1.2. Պետական գրանցման վկայականի հանձնման օրը անհատ ձեռնարկատիրոջը տրամադրվում է վկայականի հանձնումը հավաստող տեղեկանք (ստացական, օրինակելի ձևը կցվում է):

1.3. Պետական գրանցման վկայականը պահպանվում է դրա համար առանձնացված թղթապանակում (թղթապանակներում):”:

2. Կարգի 2-րդ կետում՝

- 1) 2.1-րդ ենթակետում “գրավոր դիմումի համաձայն, որին կցվում է” բառերը փոխարինել “ներկայացնելով” բառով.
- 2) 2.2-րդ ենթակետում “դիմումի ներկայացման” բառերը փոխարինել “դիմելու” բառով.
- 3) 2.3-րդ ենթակետում “Պետական գրանցման վկայականները հետ ստանալու վերաբերյալ անհատ ձեռնարկատերերի դիմումները, տեղեկանքը” բառերը փոխարինել “Տեղեկանքը” բառով.

3. Կարգի 3-րդ կետի 3.1-րդ ենթակետում “դիմումների” բառը փոխարինել “ամսաթվերի” բառով:

4. Կարգով հաստատված օրինակելի ձևը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

“ՏԵՂԵԿԱՆՔ (ՍՏԱՑԱԿԱՆ) N _____

Տրվում է _____-ին առ այն, որ 20__թ.

_____ին նա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի _____

տեսչություն է հանձնել պետական գրանցման (հաշվառման) N _____ վկայականը:

Տեսչության պետ՝ _____

Կ.Տ.՝: